

# ՊԱՐԸ՝ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ ԵՎ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ստեփանակերտի «Արցախ» պարի պետական համույթի մասին ուզում են գրել ոչ որպես լրագրող, այլ որպես հանդիսատես, ով նստած է Ռոստոմ քաղաքի լավագույն դահլիճներից մեկում և անհամբեր սպասում է վարագույրի բացվելուն:

Դանդաղ բացվում է վարագույրը: Բեմում պատմական Հայաստանի Արցախ աշխարհի, գեղեցիկ տարագույլ պարուհիներն են անշարժացած բեմական տարբեր դիրքերում: Նոսն մուգ երանգով թավիշը իջնում է մինչև հատակ ընդգծելով պարային գեղեցիկ էլեմենտը, բարակ մեջքի արծաթ գոտիները, գլխանոցների ոսկյա ճակտաշարերը, մանյակներն ու

*Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,  
Եվ որ այստեղ է՛ բարձրիկ Սևանում,  
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:  
Պարզապես Դավիթն այստեղ է կրվել:  
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել:  
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,  
Քարից շինել ձուկ, և թռչուն՝ կավից,  
Ուսուցմա՛յ և համար և աշակերտն էլ  
Գեղեցկի՛ն,  
Բարու՛ն,  
Վսեմի՛ն,  
Լավի՛ն...*



օղերը... Իսկ սուրմաքաշ սևորակ աչքերում հայացքը հպարտ ու վեհ է, շարժումները նագանի, երբեմն խրոխտ: Ահա և պարը դանդաղ է ասելիք ճանաչողություն, ժողովրդի հերոսական անցյալ ու ներկա: Պարզվում է, որ բեմում «Տիգրանակերտ» պար-ներկայացումն էր: Դահլիճը թնդում է ծափերից:

Համերգ վարողը՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Եվրիկյանն իր դերի մեջ է.

*... Մենք քիչ ենք, սակայն մեզ  
հայ են ասում:  
Մենք մեզ ո՛չ որից չենք գերադասում:  
Պարզապես մենք էլ այի տի ընդունենք,*

Ապա բեմով մեկ իր ինքնատիպ հումորով նոր բեմադրություն է վազում, բողբոջում, փոթորկում է «Լարաբադա նախշուն բաջին» (մենապարուհի Դիանա Համբարձումյան): Պարը ներկայացված է նոր ոճով ու ասելիքով:

Հանդիսատեսին շարունակում են լարված ու հիացած պահել «Նավաստիներ», «Արցախ» և այլ գեղեցիկ կատարումներ:

Ամենացնցողը Մարկ Բեռնեսի «Жырагли» հայտնի մեղեդու բեմականացումն էր որպես պար ու տխուր հիշեցում բոլոր ապրողներին առ այն, որ հանուն հայրենիքի նահատակները, ռազմի դաշ-

տից չվերադարձաները ձերմակ կռուկներ դարձած չվում են կապույտ երկնքով հոգնած ու տխուր և երբեմն-երբեմն արձագանքում են երկինք ուղղված մեր լուռ հայացքներին...

Եվ ինչպիսի բարձր արվեստով է ներկայացված պար-լեզենդը (բեմադրող Միեր Բաբայան, Ռատու Բաբայան):

Հուզվում ու արտասվում է դահլիճը՝ հիշելով ոչ միայն հայրենական պատերազմի, այլև արցախյան հերոսամարտի, ապրիլյան քառօրյալի մեր գոհված զինվոր որդիներին: Որքա՛ն ճաշակով ու գունային ներդաշնակությամբ էին ընտրված հագուստները: Ասելիքն ու շարժումները հղկված էին կատարելության աստիճանի:

Գարձես պարի շարունակությունն է Զարենցի տողերը.

*Էլի գարուն կգա, կբացվի վարդը,  
Միրեկանք էլի յարին կմնա:  
Կփռվի տարիքը, կփռվի մարդը,  
Բլբուլի երգն էլի սարին կմնա:*

Գույները խտանում են, երբ երգիչ Վիտալի Լազարյանը կատարում է «Վերցումք տղերք հրացան» ռազմահայրենասիրական երգը:

Էլ չեմ ասում, թե դահլիճը ինչ ջերմությամբ ընդունեց Խաչատրյանի «Մուսերով պարը»: Այնուհետև հնչում է Շիրազի աղերս-պատգամը՝ «Միրտա տարեք Արա-

բատ»... Նույնիսկ օտարի աչքերով եթե նայես «Արցախ» պարայինի ելույթը, կհասկանաս, որ խոսքն այստեղ սոսկ պարի համույթի մասին չէ, այն պայքարող ժողովրդի հոգու ճիչն է, լինելիության հաստատումը:

... Իսկ սիրո մասին «Արցախը» չխոսել չի կարող... Բեմում հյուսվում է գեղեցիկ սիրո մի պատմություն. Սայաթ-Նովա «Չկա քիզի նման»...

Միրահար պատանու դերում բեմադրիչ Միեր Բաբայանն է, իսկ «սիրուհին» գեղեցկուհի Անժնիկ Ավագյանը:

Այդ օրը արցախցիների հյուրն էր նաև Ռոստոմի ս. Հարություն էկեղեցու Հայորդաց տան «Զվարթնոց» պարի համույթը (գեղ. դեկավար Անահիտ Չուխաջյան):

Վայելում ենք այս գեղեցիկ կատարումները և ափսոսում, որ մեր փոքրիկ հայրենիքից եկած հայ ու Հայաստանոտ այս հրաշք հեքիաթն ավարտվում է... Այն ավարտվում է այստեղ դահլիճում, բայց շարունակվում է մեր սրտում ու հոգիներում, ապրելով ու ապրեցնելով ճշմարիտ արվեստի հզոր ուժով:

Շնորհակալություն, որ դուք մեզ հետ էիք, «Արցախ»:

**Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,**  
**լրագրող**  
**Լուսանկարները՝ Կարինե ԲԱՆՆՑՆՆԻ**



Նոր ուսումնական տարում Դոնի Նախիջևանի հայ համայնքում սկսեց գործել հայոց պատմության խմբակ, որը ղեկավարում է տողերիս հեղինակը: Խմբակ կարող են հաճախել բոլոր ցանկացողները, ովքեր հետաքրքրված են հայ ժողովրդի պատմությամբ ու մշակույթով:

Վերջերս խմբակի առաջին բաց դասը նվիրված էր Դոնի Նոր Նախիջևան քաղաքի հիմնադրման 240-ամյակին: Երեխաներին ներկայացվեց, որ Դոնի Նոր Նախիջևանի հայկական գաղութը հիմնվել է 1779թ. Դրիմից 12600 հայ ընտանիքներ վերաբնակեցնելու արդյունքում: Տեղափոխվածները հանգրվանում են Դոնի տափաստանում և Ա. Դմիտրի (հետագայում Դոնի Ռոստոմ քաղաք) ամրոցի մոտակայքում հիմնում Նոր Նախիջևան քաղաքը և 5 հայկական գյուղ (Չալլթը, Մեծ ու Փոքր Սալա, Կրիմ, Նեպիտա): Եկատերինա II կայսրուհու հա-

## ՀԱՅՈՑ ՊԱՏԱՌՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԲԱՑ ԴԱՍԸ

տուկ հրովարտակով (1779թ. նոյեմբերի 14-ին) դրիմահայերը տեղում մեծ արտոնություններ են ստանում:

Դրիմի հայերը, օգտվելով տեղի նպաստավոր պայմաններից և պետության ընձեռած հնարա-

տուրը և արդյունաբերությունը, ինչպես նաև ծաղկում ապրեց գրականությունն ու արվեստը: Դոնի հայությունը ծնեց իր նշանավոր գավակներին Միքայել Նալբանդյանին, Մարտիրոս Մարյանին, Ռափայել Պատկանյանին,

Պատկանյանի բանաստեղծություններից: Հայոց պատմության խմբակի առաջին բաց դասը շատ տպավորիչ էր և ուսանելի:

Դոնի ես մեր վաղվա օրը, սիրելի մանուկ, պատանի, երիտասարդ: Դու ես մեր պատ-



վորություններից, զարգացրեցին տնտեսության շատ ճյուղեր:

Մարիետա Շահինյանին, Հարություն Ալամդարյանին և շատ շատերին:

մության ու սուրբ լեզվի կրողն ու պահպանողը, սիրի ր և պաշտի ր քո ազգը: Ամուր պահիր հայի գեներ, աշխարհի որ ծայրում էլ գտնվես:

**Շովինար ՍԱՐԳՍՅԱՆ,**  
**ուսուցչուհի**